

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**№ 13/08**

**Քաղ. Երևան**

**26 մայիսի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ. Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ. դամյան, Ա.Ա. Տոնիկյան և Ա.Վ. Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. մայիսի 26-ի նիստում (արձանագրություն № 61/6) քննարկեց ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի 2008թ. հունվարի 28-ի դիմումը Օբշեստվո և Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերության «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱՕՄԴ-ի 33-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ իր ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում կատարված մարքետինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) ապրանքային նշանը 33-րդ դասի ապրանքների համար սեփականատիրոջ կողմից չի օգտագործվում: Հայկական շուկայում չկա «ARTSIV» ապրանքային նշանով մակնշված 33-րդ դասին պատկանող ոչ մի ապրանք: Դիմողի ընկերությունը նաև հարցում է կատարել ոգելից խմիչքների մասնագիտացված խանութներում և առավել հայտնի հանրախանութներում, որտեղից հայտնեցին, որ իրենց ունեցած տեղեկություններով վաճառքի մեջ չկա և երբևէ չի եղել «ARTSIV» ապրանքային նշանով մակնշված ոգելից խմիչք:

Հետևաբար «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, «ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ՝ բոլոր գրանցված

ապրանքների կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքին նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն չի օգտագործվել ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ վերը նշված օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից:» Ելնելով դրանից և հիմք ընդունելով օրենքի նշված դրույթները, դիմողը խնդրել է «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՕՄԴ 33-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 04.04.08թ. հետձանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) ապրանքային նշանի սեփականատեր Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերությանը (121087, Москва, Багратионовский проезд, д.7, корп.2 РОССИЯ) բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. ապրիլի 1-ի ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. մայիսի 27), ՀՀ արտոնագրային հավատարամատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին:

Ըստ գործակալության ստացված հետձանուցման, հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստացվել է 11.04.08թ., սակայն 2008թ. մայիսի 26-ի բողոքարկման խորհրդի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև սեփականատիրոջից որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերությունը, որը պատշաճ ծանուցված է եղել, սակայն 2008թ մայիսի 26-ի բողոքարկման խորհրդի նիստին չի ներկայացել և օգտագործման որևէ ապացույց չի ներկայացրել, ինչից կարելի է եզրակացնել, որ ընկերությունը «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002)

ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը համարում է, որ նշված ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ ՀՀ հավատարամատար Ջ.Մանուկյանի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել ՀՀ հավատարամատար Ջ.Մանուկյանի 2008թ. հունվարի 28-ի դիմումը ամբողջովին և Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերության «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱՕՄԴ-ի 33-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների նկատմամբ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի  
նախագահ

Ա.Ազիզյան